

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°12.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի
24-ը փետրվարի 2014թ.

Նախագահ՝ Ա.Վ. Յուզուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2013-14 թթ. ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

2. Որակի ներքին ապահովման համակարգի պետական հավատարմագրման և մասնագիտական որակավորման բարձրացման պետական չափանիշներին համապատասխան պահանջի քննարկում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

3. Մասնագիտական որակավորման բարձրացման աշխատանքներ /գիտական նստաշրջանի կամ գիտաժողովի հրավիրում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Յուզուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուզուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Ա. Վ. Յուզուլյանը: Նա ներկայացրեց ուսումնական պլանի հիման վրա կազմված 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը /17-29.03.2014թ/, որը կազմվել է ԻԿՄ և ԿՄՖ մասանգիտության I, II կուրսերի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Է. Կ. Օսիպովան: Նրանք համակարծիք էին բազմիցս քննարկված ժամանակացույցին և առաջարկեցին ներկայացնել հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոններին ժամանակին իրականացնել 2013-14թթ. II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման գործընթացը:

1. 2013-14թթ. II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննություններ անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկայացրեց որակի ներքին ապահովման համակարգի պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան պահանջները: Զեկուցողը ընդգծեց, որ անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներում ավելացնել ընդգրկված ուսանողների թիվը, որը նախադրյալ կհանդիսանա ուսանողների ինքնուրույն աշխատանքին, ինչպես նաև կրթական, գիտական և հետազոտական աշխատանքներում:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկայացրեց ֆակուլտետում կարգապահական կանոնակարգային տույժերի մասին: Ընդգծելով՝ ֆակուլտետում կրճատվել են անհարգելի բացակայությունները, չկան դասաժամերի բացթողում, դասերը կայանում են ըստ հաստատված ժամատախտակի և դասացուցակի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին, որ անհարժեշտ է ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում, ինչը կնպաստի մասնագիտության խորը յուրացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հանձնարարել դեկանատին սահմանել հսկողություն իրականացնելու որակի ներքին ապահովման համակարգի պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան բոլոր պահանջները:

1. Հանձնարարել կուրսղեկներին դեկանատի հետ միասին աշխատել կրճատելու անհարգելի բացակայությունները:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետում իրականացվող մասնագիտական որակավորման բարձրացման աշխատանքների մասին՝ հանդես եկավ հանձնարարականներով ամբիոններին, որ անհրաժեշտ է գիտական աշխատանքների, հոդվածների, ընթերցումների հետ համատեղ կազմակերպվեն նաև գիտական նստաշրջան կամ գիտատաժողով: Այն խթան կհանդիսանա մասնագիտական որակավորման բարձրացման աշխատանքների կազմակերպման գործընթացում: Ներկայացվածի վերաբերյալ անցկացվեց մտքերի փոխանակություն և արժանացավ հավանության:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել գիտաժողովի հրավիրման թեման և ժամանակացույցը, ընդգրկելով ֆակուլտետի Ուս. խորհրդի և ՌԻԳԸ նախագահներին:

Ֆակուլտետի խորհրդի նախագահը օրակարգի հարցերից բացի հանդես եկավ հանձնարարականով ամբիոնների վարիչներին՝ կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերահսկողության մասին, կազմակերպել նաև դասալսումներ և ակնարկային դասախոսություններ:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**